

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍՎՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեսչական մարմնի կողմից 2018 թվականի 1-ին կիսամյակում իրականացվել է թվով 124 ստուգում, որից 123-ը Տեսչական մարմնի ստուգումների ծրագրով նախատեսված, իսկ 1-ը՝ բողոքի հիման վրա: Տարեկան ծրագրով նախատեսված թվով 3 ստուգում չի իրականացվել՝ կապված տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու հետ, թվով 1 ստուգում չեղյալ է ճանաչվել, իսկ 1 տնտեսվարող սուբյեկտ խոչընդոտել է ստուգման ընթացքը:

Իրականացված ստուգումների արդյունքում 85 տնտեսվարող սուբյեկտների մոտ (82.5%) հայտնաբերվել են տարբեր բնույթի, այն է՝ համապատասխանության գնահատման փաստաթղթերի բացակայություն, մակնշման, չափազիտական նորմերի և այլ խախտումներ: Խախտումներ չեն հայտնաբերվել 18 տնտեսվարող սուբյեկտների մոտ, իսկ թվով 21 ստուգում ընթացքի մեջ է:

Ստուգումների ընթացքում, Տեսչական մարմնի կողմից բացահայտված խախտումների և թերությունների վերացման նպատակով արձակվել է թվով 10 կարգադրագիր:

2018 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում նշանակված տուգանքների գումարը կազմել է 13,860,000.0 (տասներեք միլիոն ութ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից պետական բյուջե է վճարվել 8,740,000.0 (ութե միլիոն յոթ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ գանձելությունը կազմելով 63,1%, գանձումների գործընթացն օրենքով սահմանված կարգով շարունակվում է:

Նշված ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների ընթացքում կիրառվել են թվով 229 ստուգաթերթ, որից 155-ով (67,7%) արձանագրվել է խախտում՝

- **ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի գործունեության ոլորտում** իրականացվել է թվով 9 ստուգաթերթով ստուգում, որից 8-ով արձանագրվել են խախտումներ:

Խախտումների բնույթը հետևյալն է. վառելիքը իրացվել է առանց մակնշման, վառելիքի փորձարկման արդյունքների ցուցանիշները չեն համապատասխանել տեխնիկական կանոնակարգով սահմանված անվտանգության ցուցանիշներին, չափման միջոցները շահագործվել են առանց ստուգաչափման:

- **ավտոգազալիցքավորման ճնշակայաններում (ԱԳԼՃԿ)** իրականացվել է թվով 11 ստուգաթերթով ստուգում և բոլոր ստուգաթերթերով արձանագրվել են խախտումներ:

Խախտումների բնույթը հետևյալն է. վաճառքը իրականացվել է խմ-ով՝ կգ-ի փոխարեն, ճնշումը գերազանցել է թույլատրելի չափը, չափման միջոցները շահագործվել են առանց ստուգաչափման:

- **օժանելիքակոմետիակական արտադրանքի անվտանգության ոլորտում** իրականացվել է թվով 19 ստուգաթերթով ստուգում, որից թվով 10 ստուգաթերթով արձանագրվել են խախտումներ:

Խախտումների բնույթը հետևյալն է. արտադրանքն իրացվել է առանց համապատասխանության հայտարարագրի և մակնշման:

- **խաղալիքների անվտանգության ոլորտում** իրականացվել է թվով 20 ստուգաթերթով ստուգում, որից թվով 19 ստուգաթերթով արձանագրվել են խախտումներ:

Խախտումների բնույթը հետևյալն է. արտադրանքն իրացվել է առանց համապատասխանության սերտիֆիկատով և մակնշման:

- **երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի ոլորտում** իրականացվել է թվով 11 ստուգաթերթով ստուգում, որից 6-ով արձանագրվել են խախտումներ:

Խախտումների բնույթը հետևյալն է. արտադրանքն իրացվել է առանց համապատասխանության գնահատման փաստաթղթերի և մակնշման:

- **չափումների միասնականության ապահովման ոլորտում** կիրառվել է թվով 43 ստուգաթերթ, որից 24-ով արձանագրվել են խախտումներ:

- **մնացած գործունեության ոլորտները միասին** կիրառվել է թվով 116 ստուգաթերթ և 77-ով արձանագրվել են խախտումներ: